

րարի Որդւոյն³ Աստուծոյ բացեալ Է դուռն շնորհի ողորմութեան նորա առ ամենեսեան, որ սիրեն զնա եւ պահեն զբան հրամանի նորա⁴, յորս ծագեալ լուսաւորէ լոյս փառաց վարդապետութեան նորա: 40 Եւ բեմբն չորեքլուսի կանգնեալ որ երեւեցաւ քեզ, բարձր յերկրէ մինչեւ յերկինս՝ հաւատն ճշմարտութեան Է, որով վերանան արդարքն ի ծանրութենէ աշխարհիս կենաց ի թեթեւութիւն երկնից բնակութեանն: 41 Եւ զի ամպեղէն գունով երեւեցաւ բեմբն՝ վասն զի որ վերացաւ ամպով⁵՝ նոյն գալոց Է վերացուցանել ընդ իւր զարդարս, ուր բազում ակօբեանք են⁶ ի տան արթայութեանն Յաւր. զոր եւ դու տեղեկացեալ ուսար⁷ ի սուրբ Յոզւոյն, որ խաւսեր ընտիր⁸ արամբն Պաւղոսի, թէ *Ամպովք⁹ յափշտակիմք ընդ առաջ Տեառն յաւդս^ա*: 42 Եւ տեսրասկեղն ոսկի, որ ի վերայ բեմբին, զորով էր արկեալ մաքուր կտան բարակ¹⁰, որով ծածկեալ էր սուրբ սեղանն եւ որ ի նմա խորհուրդն՝ գիտեա՛ եւ ծանի՛ր, զի ծածուկ եւ անյայտ Է խորհուրդ աստուածային գիտութեանն, պատուականութեամբ եւ մաքրութեամբ՝ ըստ պատուականութեան մաքուր¹¹ ոսկւոյն եւ լուսափայլ մաքրութեան կտաւոյն¹². յորոյ վերայ կանգնեալ¹³ նշան¹⁴ կենդանացուցիչ խաչին որ երեւեր՝ կենդանացեալ¹⁵ կանգնեցան ամենայն արարածք, զլորեալք մեղաւք. եւ դարձեալ, զի նախ խաչն երեւի ի գալստեանն Քրիստոսի, եւ ապա յայտնի խորհուրդ դատաստանին եւ հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց:

43 «Եւ զի եղեալ աւղ քաղցրաշունչ, որ եբաց զմասն ինչ կտաւոյն՝ ի մի՛տ առ, զի ցուցաւ¹⁶ քեզ ի սուրբ Յոզւոյն¹⁷ քաղցր խաղացմունք, որ յայտնէ սրբոց իւրոց զխորհուրդ ծածկեալ՝ աստուածութեան իւրոյ: 44 Ընդ որով

1 Ձ. բանալ... եւ տարածեալ լոյսն

2 Ձ. գալստեան. Ատ. ի գալստեան

3 ՁԱտ. կենդանի որդւոյն

4 ՁԱտ. չիք նորա

5 Ձ. վասն զի վերացաւ ամբով

6 ԲԳտ. բազում են եւ անթիւ օթեանք

7 ՁԱտ. զոր եւ քո ուսեալ

8 Ձ. չիք ընտիր

9 Ձ. ամբովք

ա Ա Թես. Դ 16

10 Ձ. զմաքուր կտան զբարակ. Ատ. եւ բարակ

11 Ձ. չիք մաքուր

12 Ատ. լուսափայլութիւն մաքուր կտաւոյն

13 Ատ. տեսանէիր կանգնեալ

14 ՁԱտ. զնշան

15 Ձ. խաչին երեւեր կենդանացեալ. Ատ. խաչին որ երեւեր. յոր կենդանացեալ. ԲԳտ. խաչին՝ որով երեւեր, կենդանացեալ

16 ԲԳտ. իմա զի ցուցաւ

17 Ձ. սուրբ հոգւոյն